

րու մատենագիրներէն «Citez de Jérusalem» ի հեղինակը (1187) եւ Տիւրացի կիյեօմի անանուն շարունակողը (1261) մէջ կը բերեն աւանդութիւն մը, որուն համաձայն, մեր Տէրը խաչը կրած ժամանակ այստեղ քիչ մը հանգիստ ըրաւ: Ահա անոնց խօսքերը. «Յովսափատի ճանապարհին աջ կողմը վանք մը կար որ կը կոչուէր Հանգստան: Հոն է որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս քիչ մը հանգիստ առաւ, երբ խաչուելու կը տանէին զինքը»: Այս աւանդութեան տեղւոյն եկեղեցիին շինութեան թուականը և հեղինակը ցարդ անծանօթ կը մնան, բայց իր աւերակներէն դատելով կը հետեցնենք թէ շատ հին աղօթարան մըն էր, եւ որուն վերաշինութիւնը կատարուած է 1229 ին, երբ սուլթան Մէլիք էլ-Քամէլի և Գերմանիոյ Ֆրէտէրիք Բ. կայսեր միջև խաղաղութեան դաշինք մը կնքուեցաւ. բայց կ'երեւի թէ այս շինութիւնը կիսկատար մնացած է: Այս մատուռը գտնուած է 1889 ին. երեք զաւրթ ունի՝ իրարմէ բաժնուած քառակուսի սիւներով. տակաւին կը տեսնուին անոր երկու կողակներուն մնացորդները (Ham. էջ 211):

9. Այն սեղը՝ ուր Պետրոս կը կտրէ Մաղոսի ալանջը. — Դարձեալ Փելիքս Ֆապրի կը գրէ. «Գեթսեմանիի պարտէզին պատին մօտեցանք: Հոն քար մը կար որ ցոյց կուտար այն տեղը ուր Պետրոս տեսաւ Մաղքոսը երբ ան մեր Տիրոջ երեսին ծանր կերպով կ'ապտակէր, ու նախանձախնդրութեամբ լեցուած՝ հանեց սուրը և յառաջանալով անոր մօտ ուղեց երկուքի բաժնել զլուխը, բայց հարուածը վրիպած ըլլալով ականջը կը կտրէ: Տէրը կը յանդիմանէ Պետրոսը ու կը սաստէ զայն որ հեռանայ իր սրովը եւ թոյլ